

թէ ոչ իրեքը դարձեալ նոյն կմսան, ինչ որ
եղել է մինչեւ այժմ։ սիմօնականութեան
շնորհի անշափահասների ամուսնութիւն եւ
հայ ընտանեաց քայրայում։

Գ. Վ. ՅՈՎՈՒԹԵԱՆ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՍ



ԵՐԵՒԱՆԻ ՀՅՈՒՅՑ ՀՊԻԵՒՈՐ ԹԵՄԸԿԵՆ ԴՊՐԵՆՈՅԲ:

ԹՊ.ԹԱԿՑԱԽԹԻՒՆ «ԱՐԵՐԱՑ.»

Երեւանի թեմական Դպրանոցն այնպիսի
հաստատութիւններից է, որի վարչչները երկար
ժամանակ չեն կարողանում մնալ նոյն պաշտօնի
մէջ։ Կան ի հարկէ ուսուցիչները որոնք տարիներ
շարունակ ծառայում են այդ Դպրանոցում, սա-
կայն չի եղել տարի, մանաւանդ վերջին ժամա-
նակներս, որ խումբը—վարչական մարմինը նոյնը
մնար առանց նշանաւոր փոփոխութեան, ամէն
տարի նոր ուսուցիչներ են գալիս, քիչ թէ շատ
ծանօթանում Դպրանոցի աշակերաների հետ ու
իրենց գործերը քիչ թէ շատ կանոնաւորում՝ և
անա կամ արձակւում են այս կամ այն պատ-
ճառով, կամ աւելի օգտաւէա պաշտօն գանե-
լով, թսզնում են ուսուցչութիւնը, Սրանից ա-
ւելի մեծ շարիք է Դպրանոցի վարչչների—Տե-
սուչների ամէն տարի փոփոխութիւնը, նախ որ ամէն
նորեկ Տեսուչ ըերում է իւր հետ նոր ուսու-
ցիչները դասերը բաժանում է ըստ իւր ցանկուա-
թեան ու հայեցալութեան։ այնպէս որ մի ուսու-
ցիչ որ նախընթաց տարին, օրինակ հայոց լեզուի
դասատու էր, նոր Տեսուչի ժամանակ այդ լեզուա-
դէալ պատահմանը դառնում է ընապիտութեան
կամ Աստուածաբանութեան գասաւու, նոյն
տեսակ փոփոխութեանց ենթակայ են և գլու-
ցական կարգապահութեան կանոնները։ Խսկ թէ
որքան է տուժում Դպրանոցը վարչչների, ու-
սուցիչների ու կարգ ու կանոնների փոփոխմանը՝
յայտնի է ամէն մի խոհական անձի։ Մեր Դպրա-
նոցի մեծագոյն շարիքներից մէկը պիտի համարել
այդ երեսիթը։

Գալով 1899/900 ուսու տարուան պիտ ա-
սեմ, որ Դպրանոցը ունէր 20 ուսուցիչ Հայր
Տեսչ՝ Բարձր Իննիկ վարդապետի հետ ի միա-
սին։ Ուսուցիչներից երկուուն արձակուեցան ինչ
ինչ զեղծումների պատճառով, որոց դասերի մի
մասը (4 դաս) վերցրեց ինքը Հայր Տեսուչը մի
մասը յանձնեց Դպրանոցի թուաբանութեան
դասատու Պ. Յ. Կարախանեանին, իսկ մնացեալ

23 դասի համար հրաւելուեցաւ Մայր Աթոռի
Գէորգէան ձեմարանի Դասատու պ. Յ. Արիս-
տակէսեանու Այժմ ուսուցիչների թիւն է ուրեմն
19, որի մէջ պէտք է հաշուեն և վերակացու-
նեն, ու գրադարանապետը։

Աշակերաները թուով մօտաւորապէս 400 և
զետեղուած 13 դասարանում։ Երեք նախակրթա-
րան իրենց զուգընթացներով, վեց դասարան,
որոնցից առաջին դասարանը ունի կրկին իւր
զուգընթացը։ Դպրանոցին աշակերանները գլուա-
ւորապէս աղքատ և հասարակ դասակարգի զա-
ւակներ են՝ գիւղացի, թէ քաղսովացի։ Ճշմարիտ
է մեծամասնութիւնը թոշակատու է, ոսկային
այդ թոշակիներն այնքան չնչին են և դժուարու-
թեամբ են հաւաքւում, որ Դպրանոցին անտեսսա-
կանի վերայ առանձին աղքացութիւն չընին։
Թոշակատուներից զատ կան նաև ձրիավարժներ
և այնպիսիք որոնք Դպրանոցին որդեգիր են հա-
մարուում և հագուստ ու դասական պիտոյք
ստանալու ակնկալութիւն ունին։ իսկ թէ ի՞նչ
դժուարութեամբ կարելի է լինում նոցա համար
հայթայթել այդ ըերբը հասկանալի է, քանի որ
Դպրանոցը ոչ մի նկեթական միջոց չընին նոցա
համար այգպիսի զոհողութիւն անելու։ Դրա-
բանոցի Տեսչի վերայ է լնկնում հոգալ այդ կա-
ռեթը։ Զգիւեմ ննչապէս է եղել նախկին տարինե-
րում, միայն այս տարի ականատես եմ, թէ
ի՞նչպիսի մեծ զոհաբերութիւն է հարկաւոր լի-
նում Դպրանոցի Տեսչի կողմէց յեշեալ որդեգիր
համարուած աշակերանների նկեթական պակասու-
թիւնները լրացնելու համար։ Այս տարի գոնէ
այդ աշակերտները Հայր Տեսչի անխոնջ աշխա-
տանքին ու հայրական հոգատարութեան են
պարտական իրենց ունեցածով։ Դպրանոցին
աշակերտների այգպիսի զբութիւնը քիչ չէ
նպաստում մտաւորականի յետամնացութեան,
այս բանը աչքի է լնկնում մանաւանդ տար-
ուայ սկզբները։ մինչեւ որ աշակերտները հար-
կաւոր եղած դասադրքերն ու դասական պի-
տոյքները ձեռք բերել են կարողանուում և վար-
ժապետը կանոնաւոր դասեր է սկսում։

Նկեթականի պակասութիւնը զդալի է ոչ
միայն աշակերտների, այլ նոյն իսկ հէնց Դպրա-
նոցի համար։ Խսկ զպրոցական հաստատութեան
աղքատութիւնը՝ խոչնզատ է նաև այն հաստա-
տութեան յառաջադիմութեան, Պրտեղ տես-
ուածք բան է, որ 400 աշակերտ ունեցող Դրա-
բանոցին հաստատութեան աւագ վերակացուի
ունիկը լինի ոչ աւելի քան 200 բուրելի։ իսկ
վերակացունը 100 բուրելի, գրադարանապետի
ունիկը 100 բուրելի, հոգաբարձական քարտու-
զարնը կրկին 100 բուրելի։

Այսպիսի չնչին ուսնկերով անկարող է

կառավարուել մէ կըթուած անձնաւորութիւն, այն էլ յաճախ ընտանիքի տէր մարդ: Աւստի և Քպրանոցի վարչութիւնն ստիպուած է լինում այդ պաշտօններն յանձնել Քպրանոցի գասատուուսուցիւնըն, որով և այսօր մենք դասերից ազատ վերակացու չունենք մեր գպրանոցում՝ որ վարժապետների հեւանդութեան կամ բացակայութեան ժամանակ աշակերտներին զբաղեցնէր և պարապ շմ՛նային: Բայց այս գեռ չաքեաց փոքրադոյնն է. ի՞նչպէս պէտք է պարապէ այն ուսուցիչը, որ ունի շաբաթական 20-22 դաս և գրա հետ միտսին դիցուք հոգաբարձութեան քարտու զարի պաշտօն, որ ահազին ժամանակ է պահանջում, կամ ինչպէս կարող է պարապէլ այն ուսուցիչը, որ 20-24 դաս ունենալուց յետոյ կատարում է նաև վերակացուի պաշտօն: Ժամանակ կունենայ պարապէլու արդեօք իր գասերով այն վարժապետը, որ թէ բաւականին զատեր ունի, թէ վերակացու է և թէ դրադարանապետ: Պարզ է որ պաշտօնների բազմապահութեամբ նորա չեն կարող առաջ տանել իրենց գործն այնպէս, ինչպէս պահանջում է նրանց որբազան կազումը:

Հնայելով այսքան գժուարութիւններին ու անյարմարութիւններին, այնուամենայնիւ անուշանալի է, որ աչքի ընկնող բարեփոխութիւններ են կատարուել ներկայ ուսումնական տարրուայ ընթացքում:

Ա) Ա. և Բ. Նախակրթարանների դասերը, որի համար աւելի համբերութիւն և մանկավարժական հմտութիւն է հարկաւոր, քան բարձր դասարաններում, աւանդուում էր առաջ դասը 20-25 ըուբելի: Այս տարի միայն այդ ուոճիկը 30-40 ըուբելու է բարձրացել Քպրանոցի Տեսչի շնորհիւ:

Բ) Մէր Քպրանոցը թէւ 60 տարուց աւելի է, որ գյութիւն ունի, այնուամենայնիւ մինչև այժմ սեփական բժիշկն ու բուժաբանը չէ ունեցել: Այս տարի Հայր Տեսչի յատուկ խնդրանաց համաձայն բժիշկ պ. Արամ Տ. Աւետիքեանը ոիբայօժար կերպով յանձն է առել իւր ազգայնոց փոքրիկների ֆեղքականի հոգաբարձութիւնը՝ ձբի՝ միայն ստամալով կառավարձ որաշեալ գումար: Բուժաբանն համար գեղեր մատակարարում է պ. Կ. Աքբեկեան իւր սեփական գեղատնից չաենուուած զիջումով. ազքատ աշակերտների համար նոյն կոկ ձբի:

Գ) Հոգեոր Քպրանոցի պատշաճ և հաւատոյ գլացմունքը զօրացնող մի նոր կարդաւութիւնն է այս տարի նոր սկսած խմբովին ազօթքը, որ տեղի է ունենում Տիրամօր պատկերի առաջ իւրաքանչիւր առաւած դասների կամուլին:

Դ) Աշակերտական կարդապահութեան վերաբերեալ զանազան կարդ ու կանոններ, որոց մէջ աչքի է ընկնում համարագրութիւնը աշակերտների ըստ հասակի. այնպէս որ թէ գասերից առաջ և թէ գասերից յետոյ իւրագանչիւր աշակերտ ճանաչում է իւր տեղը, որով և աշակերտները կարդ են կանգնուում առանց գժուարութեան և կարձ միջոցում: Պատերից յետոյ աշակերտներին այդպէս կարդով վերակացուները տանում, հասցնում են մինչև քաղաքային զրուավայրը, որտեղից և նոքա ցրւում են իրենց սները: Պրանուլ ազատ են մնում աշակերտները այն բազմաթիւ շարիքներից և աշակերտական կեանգին պատիւ չըներող ու անհամապատասխան երկայթներից, որոց ականջալուը և ականատես էին լինում նախկին տարիներում, Պըպանոցիս սաները, երբ հատ կամ խումբ խումբ էին գնում, մերժ ընդ մերժ կանգ առնելով թուրքերի մէջ և երբեմն փորձութեանց ենթարկուելով Երևաննան հռչակաւոր մուաների վերայ:

Բարեփոխութիւններ նկատելի են այս տարի նաև մեր գպրանոցական հանգէսների մէջ: Երեւանի Թէմական Պպրանոցը, ինչպէս նաև մեր միւս հոգեոր Պպրանոցները եկեղեցական մի քանի տօների հանգէս են կատարում: սակայն մեր Պպրանոցում գոնէ այդ տօնակատարութիւնները կամ հանգէսները այնքան միակերպ են եղել, այնքան անգամ կըկնուել, կարդացուել ու խօսուել են միւննոյն նիւթերը, որ հանգիստականներին տաղակութիւն են պատճառել և ոչ մի բաւականութիւն: Այս տարի առաջին փորձնեղաւ մեր Պպրանոցում ոչ միայն նիւթերի բազմագանութիւն մայննել հանգէսների ժամանակ, այլ աշխատել նաև գեղասիրական (էստիտիքական) զուարձութիւն պատճառել հանգիստականներին: այս նպատակով Երաժշտական մի առձեռն խումբ պարապատեցաւ Պպրանոցիս աշակերտներից՝ պ. Հ. Յովհաննիսների և Յ. Արիստակէսների առաջնորդութեամբ:

Առ այժմ Պպրանոց կատարել է երկու հանգէս: Ս. Թագէսիի և Բարդուզիմէսուի տօնը և մի գրական սուաւօտ:

Ս. Թագէսուի և Բարդուզիմէսուի տօնակատարութիւնը մեր այս տարուայ գպրանոցական առաջին հանգէսն էր, պ. Ս. Տ. Գարբէլեան հանգէսը բաց արաւ բացարելով՝ թէ ինչ է նշանակում տօնել առհասարակ և ի՞նչ է նշանակում տօնել ազգային կրօնական ոգուլ: Ապա սրան հետեւցին ճառեր, ընտրովի ոտանաւորներ ու գեղեցիկ երգեր:

Այս հանգիսից աւելի զրացթ և ուրախ

անցաւ. 1899 թ. գեկտեմբերի 26-ին տուած աշակերտական դրական հանդէսը, որ կէս լուրջ և կէս զաւեշտական բնաւորութիւն ունէք: Խօսուեցաւ հայոց ժողովրդական դրականութեան և վիպատանութեան մասին, ապա արտասանուեցան ու. ու. սերէն, հայերէն և զերմաներէն լեզուներով ռանաւորները ու արտամախօսութիւնները: Ներկայացրին նաև Պարտնեանի Մհեծագաւածի Մուրացկաներից մի կտորը որ և շատ յաջազ անցաւ: Սակայն ամենից լաւ տպաւորութիւն արին աշակերտաների իրենց դաւառաբարը բառաներով արած պատմութիւնները:

Այս բոլորը մէջ ընդ մէջ համեմում էր ժողովրդական երգերով և նուազներով:

Մեր Դպրոցական հանդէսներին ներկայ են մենում Դպրանացի հոգաբարձուները: ուսուցչները, աշակերտաները և մեծ բազմութիւն հայ քաղաքացիներից: մանաւանդ աշակերտների ծընողներն ու ազգականները, այնպէս որ Դպրանցին հանդիսաբանը փոքրութիւն է անում այդպիսի մեծ բազմութեան համար: Ահա մեր հանդէսների միակ անյարմարութիւնը և եթէ սորա վերայ էլ աւելացնենք նաև այն: որ հանդէսների ժամանակ ստիպուած ենք լինում աթոռներ մուրալ մօսակայ տներից: հասկանալի կը մնի: թէ որպան գժուարութեամբ ենք կարողանում զլուխ բերել մեր զպըանոցական հանդէսները*:

Հ. ՅՈՒՆԻՑԻՄԵԱՆՅ.

ՏԱՇԿԱՀԱՅՔ

Ա. Պատրիարք Հայոց գեկա, 31-ին գիշերը Ազգ. պատրիարքարան մնալով յունուար 1-ի առաւոար Մայր եկեղեցւոյ ժամերգութեանց ներկայ գտնուեցաւ և նոր տարուոյ առթիւ գեղեցիկ քարոզ մը խօսելով՝ յօրդորեց ժողովուրդը որ ներկայ տօնական օրերու մէջ մանաւանդ կարուեալներու նպաստելով՝ զանոնք ալ իրենց ուրախութեանց մասնակից լնէ:

Կ. Սրբազնութիւնը յետոյ պատրիարքարան ելլելով՝ ընդունեց Մայր եկեղեցւոյ քահանայից դասուն: Թաղ. խորհրդին: Աղքատախնամի Ծնօրէն խորհրդին և Դպրաց դասուն շնորհաւութիւնները:

Կայս. Երատէով պետական վարժարաններն ընդունուած հայ ուսանողները խմբովին պատրիար-

քարան գալով նոյն օրը, Ամանորի առթիւ իրենց շնորհաւորութիւնները մատուցին և Ս. Պատրիարք հօր աջը համբուրեցին:

Նոյնպէս Ս. Յակոբյ Ազգ. Սրբազնոցի 20-ի շաբ որբեք՝ Ս. Պատրիարք հօր ներկայանալով իրենց բոլոր ընկերակիցներուն կողմէ շնորհաւորական ուղերձ մը մատուցին և օրհնութիւններ ստացան:

— Յունիվ. 2-ի առաւոտուն Ս. Պատրիարք հայրը քարոզ խօսեցաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ: բոլորովին նոր նիւթի մը՝ հին և նոր տօմարներուն և անոնց տարբերութեանը վրայ: դիմականորէն և աստղաբաշխորէն ապացուցանելով մէկ Երկմանեան Տոմարն է ամէնէն ուղիղը: Բայց, յարեց Կ. Սրբազնութիւնը քանի որ Արևելքի մէջ կապրինք և զմեզ շրջապատող ազգերըն ու ժողովուրդները հին տօմարներն ընդունած են, մենք ալ պէտք է որ այդ ընդհանուր սովորութեան հետեւնքը, ինչպէս որ կընենք:

— 1900 տարուոյ Իզմիրեան դրական մրցանակին մասնակցելու համար յանձնաժողովին դրկուած են 1. Եղովկոյ հայոց գաւառաբարբառը՝ աշխատութիւն Յովհ. Գաղանճեանի: 2. Աւսումնասիրութիւն Շարականներու վրայ. գործ պ. Բժշկեանի՝ Պարսկաստանէն. 3. Ուսումնասիրութիւն հայ Ամիրաններուն. գործ Մրմրեանի. 4. Եղիսաբեթուպոլիսի Հայերը՝ աշխատաբիրութիւն Հ. Գովիդիկեան Միթմարեան վարդապետին: 5. Գրւան հայոց պատմութեան: 6. Գրւան քահանայի: 6. Հայ բոշաները՝ Վրթանէս Փափաղեանի:

— Ս. Պատրիարք Հայոց օրհնութեան գերմը զրկելով Բրօվիտէնսի (Ամերիկա) Սրբահնամ Տիկնանց ընկերութեան անդամուհիներուն, գոյչունակութիւն յայտնած է նոցա գործունեութեան համար և քաջալեր կարգացած է:

— Ս. Պատրիարք Հայոց Ա. ծննդեան տօնի առթիւ քարոզ խօսելով Մայր եկեղեցւոյ մէջ: բացարեց սա կարևոր էկտը: մէկ մէր նախնիք ինչու Յունուար 6-ի օրն ընտարած են Ս. ծննդեան և Մկրտութեան տօնն ի մրասին կատարելու համար:

— Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Երեմիա Ս. Արքեպո. Տ. Սահակեան կարմատե հիւանդութենէ մը վերջ յունվ. 7/19-ին վախճանէր է: Յուղարկաւորութեան հանդէսը կատարուած է ըստ օրը:

Հագելցոյն Տ. Երեմիա Սրբազն ընկեր Խարբերդցի էր, և գրեթէ էկտ դարէ ի վեր անդամ Ս. Յակոբյանց միարանութեան, և սկզբան Երուսաղէմի միարան Դաւիթ արքեպոս-ին աշակերտած և ապա Յովհաննէս պատրիարքէն վարդապետ ձեռնպարուած է: Երուսաղէմի Միարանութեան կողմէ երից նուիրակ զրկուած է Ուուսատան, ուր 5-6000 ոսկի հաւաքած և իր հոգերուղին քարոզնե-

* Սակայն երեմակի յաղցր և՛ դժուարութեամբ ձևով քրուած յարողութիւններ: